

Արձանագրություն թիվ 8

2013թ. Մայիսի 15-ին տեղի ունեցած փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի:

Օրակարգ`

1. Մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքերի ամփոփում:
2. Դոցենթի կոչման երաշխավորման հարց, /թեկնածու` Սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի ասիստենտ Ա. Սոխակյանի/:
3. Թեկնածուական ատենախոսությունների թեմաների և ղեկավարների հաստատման հարց:
4. «Սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության» և «Փիլիսոփայության պատմության » ամբիոնի վարիչների ընտրության հարց:
5. Ընթացիկ հարցեր:

1. Դեկան Ա. Բաղդասարյանը ամփոփեց մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները: Նա նշեց, որ հանձնաժողովները լավ են աշխատել: Քննությանը մասնակցում էին նաև գործատուներ դրսից և որոշ ուսանողների եղան առաջարկներ:

2. Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց Ա. Սոխակյանի` դոցենտի կոչման երաշխավորման հարցը: Մրցութային հանձնաժողովը հաստատել է, ամբիոնը երաշխավորել է նաև:

Որոշեցին` երաշխավորել Ա. Սոխակյանին դոցենտի կոչման համար:

3. Դեկանը ներկայացրեց ամբիոնների կողմից առաջադրված թեկնածուական ատենախոսությունների թեմանը և դրանց ղեկավարների հաստատման:

Որոշեցին` հաստատել ներկայացված բոլոր թեմաներ և ղեկավարներին:

4. Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց Էդ. Հարությունյանի և Ս. Զաքարյանի` որպես ամբիոնի վարիչներ ընտրվելու հարցը: Նա ընդգծեց, որ

մրցութային հանձնաժողովը տվել է իր դրական եզրակացությունը, ներկայացրեց նրանց գիտամանկավարժական գործունեությունը, հրատարակված աշխատանքները:

Արտահայտվեցին պրոֆ. Հր. Միրզոյանը, պրոֆ. Ա. Մանասյանը, դոցենտ Է.

Զաքարյանը: Նրանք բարձր գնահատեցին երկու թեկնածուների աշխատանքը:

Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրվեց հաշվիչ

հանձնաժողով պրոֆ. Ա. Մանասյանի գլխավորությամբ: Քվեարկության

արդյունքում Էդ. Հարությունյանը և Ս. Զաքարյանը միաձայն ընտրվեցին

«Սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության» և «Փիլիսոփայության

պատմության» ամբիոնների վարիչների պաշտոններում:

Որոշեցին՝ հաստատել հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները:

Գիտխորհրդի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Գիտքարտուղար՝ Ս. Ֆ. Սարգսյան